կամ Խոբը ոմն պէկլէրպէկի». իսկ բերդի կառուցման մասին խոսելուց հետո, որպես բերդապահ կայազորի հրամանատար հիշում է ոմն Զղալյան Յուսուֆ փաշայի[40]։ Թվում է թե այս անունը շփոթված է Զըղալ-օղլի Սինան փաշայի անվան հետ։

Շարաֆ խանի ժամանակագրության մեջ նշված է նաև, որ Օսման փաշայի կողմից Թավրիզի գրավումից երեք տարի հետո, այսինքն 1589 թ., Ֆարհադ փաշայի հրահանգով Խոբը փաշան արշավում է դեպի Նախջևան և առանց լուրջ ընդհարումների գրավում ամբողջ Թոմանե-ն Նախջևանի օլքան և միացնում Երևանի բեկլարբեկությանը[41]։ Այնուհետև, ինչպես այդ հաստատում է նաև Իսքանդար Մունշին, Նախջևանը մնաց Զուխուր-Սա'դի վիլայեթի կազմում և ենթարկվում էր Երևանում նստող փաշային[42]։

Թուրքական 20-ամյա տիրապետության շրջանում, Խոբը փաշայից հետո հիշվում է Սեյիդ-Մուհամմադ փաշան, որը վերանվանված էր Շարիֆ փաշա։ Պարզ չէ, սակայն, թե ո՞ր թվականից է սկսվում նրա բեկլարբեկությունը։ Հայտնի է միայն, որ 1604 թ. շահ Աբբասի կողմից Երևանի գրավման ժամանակ նա եղել է Զուխուր-Սա'դի բեկլարբեկին[43]։ Իսքանդար Մունշու տված կենսագրական տեղեկությունների համաձայն, նա ծագումով պարսիկ էր, սպահանցի. երիտասարդ հասակում գնացել էր Կ. Պոլիս և ծառայության մեջ մտնելով բանակում, հասել փաշայության։ Բերդի գրավումից հետո նա ներում խնդրեց շահից, ցանկություն հայտնելով գնալ Մեշեդ՝ ապաշխարելու։ Շահը ներեց նրան և նշանակեց Մեշեդի իմամ Ռիզայի սրբավայրի մութավալլի (տնօրեն)[44]։ Սակայն և՛ Իսքանդար Մունշին, և՛ Քյաթիբ Չելեբին հաստատում են, որ Շարիֆ փաշայի օրոք Զուխուր-Սա'դում բարձր պաշտոն ուներ նաև Խոբը փաշայի որդին՝ Մուհամմադ փաշան, որը բերդի գրավումից և շահ Աբբասից ներում ստանալուց հետո բերդում գտնվող 300—400 տուն թուրքերի հետ մեկնեց Կարս[45]։

Այսպիսով, ինչպես տեսանք, մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների տվյալները բավարար չեն ճշգրտելու XVI դ., կամ, ինչպես բնորոշված է մեր նախորդ հոդվածում, վաղ սեֆյան շրջանում Արարատյան երկրում իշխած բեկլարբեկների ու թուրք փաշաների ժամանակագրական հաջորդականությունը։

Վերը կատարված ուսումնասիրության հիման վրա, սակայն, կարելի է հաստատապես ասել, որ 1515 թ. կնքված պայմանագրից հետո Զուխուր-Սա'դում իշխել է Դիվ սուլթան Ռումլուն։ Այնուհետև հայտնի չէ թե ո՞ր թվականին է նրան հաջորդել Հուսեյն-չան սուլթանը, նույնպես Ռումլու ցեղից, որից 1549—1552 թթ. Երևանի բեկլարբեկությունը վերցվել է և տրվել Շահկուլի սուլթան Ուսթաջլուին։ Շահկուլի սուլթանին 1567—1576 թթ. հաջորդել է նրա որդին՝ Մուհամմադի խան Թոխմախ Ուսթաջլուն, որի բեկլարբեկությունն ավարտվեց 1583 թ., Ֆարհադ փաշայի կողմից Երևանի գրավումով։

---

40 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 301։

41 Schéref-nameh, հ. II, էջ 292։

42 Իսքանդար Մունշի, հ. II, էջ 643։

43 Տե՛ս նույն տեղում, էջ 643 և 656, հմմտ. «Թուրքական աղբյուրները», հ. II, էջ 88—93, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 301։

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում։